Դավիթ
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1995 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Էկոնոմիկայի պետական կարգավորում» մասնագիտությամբ, 1998 թ.՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տընտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրան: 1999 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2013 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2016 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2019-2024 թթ. եղել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենը: 2024 թվականի դեկտեմբերից ՀՊՏՀ գիտական գծով պրոռեկտորն է:

Հեղինակ է 15 մենագրության և ավելի քան 100 գիտական հոդվածների ու զեկույցների:

https://orcid.org/0000-0003-3224-2461

«ԱՄԲԵՐԴ» ՏԵՂԵԿԱԳՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՈԴԻՍԱԿԱՆԸ. ԱՆԴՐԱԴԱՐՁ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ԹՎԵՐԻ ԼԵԶՎՈՎ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-100

Ստեղծագործ միտքը հաջողության գրավականն է, ինչ էլ որ անեք:

Դոնալդ Թրամփ

Հիմնաբառեր. *ՀՊՏՀ, «Ամբերդ» հետազոտական կենտրոն, «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիր, պահանջվածություն, հարցման արդյունքներ*

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի համանուն վերլուծական պարբերականը՝ «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը, արդեն հինգ տարի անընդմեջ հրապարակվում է՝ տնտեսագիտական հանրույթին ներկայանալով տնտեսական հարաբերությունների և աշխարհաքաղաքական զարգացումների ամենատարբեր դրսևորումների և հիմնախնդիրների շուրջ գիտահանրամատչելի մասնագիտական վերլուծություններով:

Տեղեկագրի փայլուն շապիկի տակ թաքնված է մի ամբողջ թիմի մանրակրկիտ աշխատանք, ջանքեր՝ ուղղված հոդվածների բովանդակության և որակի մշտական բարելավմանը:

2019-2024 թվականների ընթացքում լույս է տեսել 32 «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիր (որից 31-ը՝ ընթացիկ և 1-ը՝ հոբելյանական): Գիտակցելով միջազգայնացման անհրաժեշտությունը, սկսած 2021 թվականից, տեղեկագրի տարեկան 6 թողարկումից 2-ը եղել է բացառապես օտարալեզու: Մինչ օրս հրապարակվել են 4 ռուսերեն և 4 անգլերեն տեղեկագրեր: Ընդհանուր

առմամբ, 22 խորագրի ներքո ամփոփվել են 417 վերլուծական հոդվածներ:

Այս հոդվածը «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի հնգամյա «ոդիսականի» յուրօրինակ մշտադիտարկումն է՝ հիմնված ՀՊՏՀ աշխատակիցների և ուսանողների շրջանում կատարված հարցումների վրա: Դրանց միջոցով գնահատվել է տեղեկագրի կիրառելիության ու ազդեցության աստիճանը, վեր են հանվել առկա խնդիրներն ու թերացումները, հստակեցվել ընթերցողների շրջանակի ընդլայնման և տեղեկագրի ավելի լայն ճանաչելիության ապահովման հիմնական ուղղությունները:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի անդրանիկ թողարկումը[1] հանրության դատին է հանձնվել ավելի քան 5 տարի առաջ՝ 2019 թ. դեկտեմբերի 16-ին[2]:

«ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի համանուն պարբերականն ի սկզբանե կոչված էր լրացնելու տնտեսագիտական և քաղաքագիտական վերլուծություններն ու հետազոտությունները հանրության տարբեր շերտերին ավելի մատչելի կերպով մատուցելու՝ դեռևս բաց տարածությունը: Ուղեղային կենտրոնի հեղինակության ամրապնդման և ճանաչելիության շրջանակի ընդլայնումից բացի, դա ունի ևս մեկ կարևոր առաքելություն՝ նպաստել մասնագիտական հետազոտությունների և վերլուծությունների լսարանի ընդլայնմանը՝ մատչելի ու ընկալելի աշխատանքների մատուցմամբ:

«ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը հրապարակվում էր տարեկան 6-անգամյա պարբերականությամբ, ընդ որում, 2 համարը, սկսած 2021 թվականից, լույս են տեսել միայն օտար լեզուներով (ռուսերեն և անգլերեն):

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2025 թվականի գործունեության ծրագրով նախատեսվում է հրապարակել տեղեկագրի առնվազն 4 համար (ներառյալ մեկ անգլերեն և մեկ ռուսերեն թողարկումները)[3]:

Անցած հինգ տարիների ընթացքում ընթերցողի սեղանին են դրվել 31 ընթացիկ և մեկ հատընտիր[4] (նվիրված «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեության

[1] ՀՊՏՀ, Տնտեսագիտական համալսարանի ուղեղային կենտրոնը հրապարակել է «Ամբերդ» տեղեկագիրը. շնորհանդեսը կայացավ այսօր (լուսանկարներ), https://asue.am/am/news/presentation-of-amberd-bulletin, 16.12.2019:

[2] ՀՊՏՀ, «Ամբերդ» տեղեկագիրը 5 տարեկան է՝ https://asue.am/am/news/amberd-newsletter-is-5-years-old, 27.12.2024:

[3] «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2025 թվականի գործունեության ծրագիր (հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2025 թվականի հունվարի 31-ի N7-11 որոշման հավելվածով) / https://asue.am/upload/files/scientific-board/31-01-2025/%D5%88%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4%2031.01.2025%20N%207-11.pdf

[4] «Ամբերդ» տեղեկագիր: Հատընտիր՝ նվիրված «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 10-ամյակին, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2023, 180 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2023/amberd-texekagir-10-tari

Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ-գիտաշխատող է,, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ:

Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 60-ից ավելի գիտական և շուրջ երեք տասնյակ գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

https://orcid.org/0000-0002-5854-2473

Google Scholar profile: https://scholar.google.com/citations?user=sjZSaYsAAAAJ&hl=ru
Research Gate profile: https://www.researchgate.net/profile/Anna-Pakhlyan

10-ամյակին) տեղեկագրեր, որտեղ հրապարակվել են 417 վերլուծական հոդվածներ, որոնցից 47-ը՝ բացառապես ռուսերեն, իսկ 52-ը՝ անգլերեն:

Տեղեկագրում ընդգրկվող հոդվածների, վերլուծական և տեղեկատվական նյութերի թեմատիկ ընտրությունը կատարվում է ժամանակի ոգուն ու պահանջներին համա-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

«Ամբերդ» տեղեկագրում հրապարակված հոդվածների թիվն ըստ թողարկումների և խորագրերի[5]

«Ամբերդ» տեղեկագրի հերթական համարը	Հոդվածների թիվն ըստ խորագրերի																						ԸՆԴԱՄԵՆԸ
	Տնտեսության զարգացում	Հանրային փոխգործակցություն	Պարբերական հասարակություն	Ֆինանսական համակարգ	Հարկաբյուջետային շրջանակ	Սոցիալական ոլորտ	Ազգային հիմնադրամներ	Տնտեսվարողների գործունեություն	Շուկաներ և մրցակցություն	Շրջակա միջավայր և կիսմիջի փոփոխություն	Կրթություն, հորդորություն, գիտելիք	Տարածաշրջան և աշխարհ	Հայաստան և աշխարհ	Հայաստան և Սիկուք	Աշխարհաքաղաքական զարգացումներ	Անկախություն և մարտահրավերներ	Աշխարհաքաղաքական զարգացումներ	Միջազգային հարաբերություններ	Քաղաքական դիմանձագրեր	Քաղաքական տարածաշրջանում	Հայ հասարակության զարգացումը	Իսկ Դուք գիտե՞ք, որ...	
2019/1	1			2		1		1	2		2		1			2					1	1	14
2020/1(2)[6]		17																					17
2020/2(3)		6		2	1	1	1		1		3	1	4									1	21
2020/3(4)		3		2			1	1	1		1		3			1							13
2020/4(5)		5		1	1		1		1		1		2			1					1		14
2020/5(6)		1	5												4	1			2				13
2020/6(7)			5	2								3			2						1		13
2021/1(8)		2		5					1	1							2	1	1				13
2021/2(9)	1			2		1			3		3					1	2			1			14
2021/3(10)	1			3				1	3		1		2				1		1		1	1	15
2021/4(11)				2		1		1	2		1		1		1							1	10
2021/5(12) R.				2		1	2		2		1		3			1						1	13
2021/6(13) E.	1			1			1						5			2	1		1			1	13
2022/1(14)	1			1			1				1		2			2		1	2			3	14
2022/2(15)[7]			17																				17
2022/3(16)	1			2	1	1			1		1		3			2	1		2		1	1	17
2022/4(17)				2			1		1	1	2		1			1	1		2		1	1	14
2022/5(18) RUS				2					2	1	1		3		1	1							11
2022/6(19) ENG	1			1		1	1		2	1	2		3		1				1				14
2023 ՀԱՏԸՆՏԻՐ (10 տարի)[8]				2	1				2				5		2	1	2	1	2		2		20
2023/1(20)				1		1	1		1		2		2			3					1		12
2023/2(21)	1			2			1		3		3				2	1					2	1	16
2023/3(22)				1		2	1		1		1		1		1	1					3		12
2023/4(23)				1		1			1		1		2		3	1					2		12
2023/5(24) RUS						2			2				1		4	1							10
2023/6(25) ENG						2		1	2		1		1		1	2							10
2024/1(26)	1			1		2							1		1	3			1		2	2	14
2024/2(27)	1					2			2				2		1	2					1		11
2024/3(28)	2			1					1		1		4	1	2	1							13
2024/4(29)	2			1					2				1			4			1				11
2024/5(30) RUS									2				1		3	4						2	12
2024/6(31) ENG	1			1					2		1		3		3	2						1	14
ԸՆԴԱՄԵՆԸ	15	34	27	41	3	19	12	5	41	4	30	4	52	1	30	40	8	2	14	1	17	17	417

[5] Կազմել են հեղինակները՝ «Ամբերդ» տեղեկագրի բոլոր թողարկումների հիման վրա՝ https://asue.am/am/amberd/bulletin

[6] «Ամբերդ» տեղեկագրի 2020 թվականի առաջին թողարկումը թեմատիկ էր՝ ամբողջովին նվիրված Covid-19 համավարակի ազդեցության համակողմանի վերլուծությանը:

[7] Աշխարհաքաղաքական իրադարձություններին համընթաց՝ «Ամբերդ» տեղեկագրի 2022 թվականի 2-րդ համարը հրապարակվել է հատուկ թողարկմամբ՝ «Ռուս-ուկրաինական հակամարտություն. հայացք Երևանից» վերտառությամբ:

[8] «Ամբերդ» տեղեկագրի 2023 թվականի Հատընտիր թողարկումը հոբելյանական էր՝ նվիրված «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 10-րդ տարեդարձին: Դրանում ամփոփվել են հիմնական հեղինակների՝ տեղեկագրի նախորդ 19 թողարկումներում արդեն իսկ լույս տեսած և առավել արժեքավոր հոդվածները: Ուստի Հատընտիր թողարկումը հերթական համար չունի: Աղյուսակ 1-ի ամփոփիչ գումարային տվյալներում այդ համարի հոդվածները չեն ներառվել՝ կրկնակի հաշվարկից խուսափելու նկատառումով:

պատասխան՝ վեր հանելով հանրությանն ու մասնագիտական շրջանակներին հուզող ամենատարբեր հիմնախնդիրներն ու հարցերը, ինչպես նաև ոչ մասնագետներին տրամադրելով ժամանակակից տնտեսագիտության մասին առանցքային գիտելիքներ: Հեղինակները լիակատար ազատություն ունեն մասնագիտորեն ստեղծագործելու իրենց հուզող հիմնահարցերի շուրջ:

«Ամբերդ» տեղեկագրի հոդվածները հրապարակվում են տարբեր խորագրերի ներքո, որոնք ենթակա են փոփոխման՝ ժամանակի հրամայականից ելնելով: Այսպես, օրինակ, «Համավարակի հետագիծը» և «Պատերազմի համապատկեր» խորագրերն ավելացվել են համապատասխան իրադարձություններին համընթաց:

Աղյուսակ 1-ում ամփոփված է «Ամբերդ» տեղեկագրում մինչ այժմ հրապարակված հոդվածների բաշխվածքն ըստ թողարկումների և թեմատիկ խորագրերի: Դիտարկումից պարզ է դառնում, որ 2019-2024 թթ. առավել մեծ թվով հոդվածներ են հրապարակվել «Հայաստան և աշխարհ» (52 հոդված), «Շուկաներ և մրցակցություն» (41 հոդված), «Ֆինանսական համակարգ» (41 հոդված) ու «Անվտանգություն և մարտահրավերներ» (40 հոդված) խորագրերի ներքո: Միաժամանակ, որոշ խորագրերի տակ հրապարակումները հազվադեպ են («Հայաստան և Սփյուռք»՝ 1 հոդված, «Միջազգային իրավունք»՝ 2 հոդված և «Հարկաբյուջետային շրջանակ»՝ 3 հոդված), թեև նշված հիմնախնդիրները հանրության համար միշտ էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

ՀՊՏՀ ներքին շահառուների շրջանում «Ամբերդ» տեղեկագրի տարածվածությունն ու ազդեցությունը պարզելու համար իրականացրել ենք հարցումներ բուհի աշխատակիցների և ուսանողության շրջանում:

Հարցման նպատակն էր բացահայտել՝ արդյոք ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողներն ու վարչական աշխատակիցները տեղեկացված և հետաքրքրված են «Ամբերդ» տեղեկագրի հրապարակումներով:

Հարցմանը մասնակցել է 137 աշխատակից (գծապատկեր 1), որից 110-ը կամ 80.3%-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչ (ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է ՀՊՏՀ-ում հիմնական և համատեղության կարգով աշխատող ակադեմիական կազմի 27.2%-ը կամ միայն հիմնական կազմի 37.2%-ը), 15-ը (10.9%-ը)՝ հետազոտող կամ գիտաշխատող, 33-ը (24.1%-ը)՝ վարչական աշխատակից, ևս 3-ը՝ ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչ: Հարցվողների 17.5%-ը բուհում աշխատում է ներքին համատեղության հիմունքներով՝ միաժամանակ իրականացնելով մի քանի գործառույթ, ինչի պատճառով էլ մասնակիցների տոկոսային հանրագումարը գերազանցում է 100%-ը:

Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ ՀՊՏՀ աշխատակիցները հիմնականում ծանոթ են «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի հրապարակումներին: Նրանց գերակշիռ մասը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հարցվածների բաշխվածքն ըստ ՀՊՏՀ-ում ունեցած կարգավիճակի



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Որքա՞ն ժամանակ է՝ ՀՊՏՀ աշխատակիցները ծանոթ են «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրին

կամ 66.4%-ը (91 աշխատակից) «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրին ծանոթ է լույսընծայման օրվանից (5+ տարի), 22.6%-ը (կամ 31 հարցվող)՝ 3-4 տարի, 8.8%-ը (կամ 12 հարցվող)՝ 1-2 տարի, և միայն 2.2%-ի դեպքում է այդ ցուցանիշը մեկ տարուց էլ պակաս:

Հարցման արդյունքները ցույց են տալիս (գծապատկեր 3), որ ՀՊՏՀ աշխատակիցների մեծամասնության համար «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի վերաբերյալ իրազեկման լավագույն աղբյուր է համալսարանի կայքէջը, որ միջոցով էլ հարցվածների 48.2%-ը կամ 66 մարդ առաջին անգամ տեղեկացել է դրա մասին: Հաջորդ աղբյուրներն են գործընկերները (35%-ը կամ 48 աշխատակից), «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակիցները (21%-ը կամ 29 մարդ) և համալսարանի ղեկավարությունը (10.2%-ը կամ 14 մարդ), որոնք ակտիվորեն աջակցում են աշխատակիցների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն այս առումով: Համեմատաբար փոքր է գրադարանից, ընթերցասրահից, առցանց որոնման արդյունքում, ուսանողներից կամ ֆակուլտետային ցուցափեղկից տեղեկագրին ծանոթացած աշխատակիցների թիվը:

Միաժամանակ, ՀՊՏՀ աշխատակիցների գերակշիռ մասն «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի հավատարիմ ընթերցող է (գծա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ինչպե՞ս կամ ո՞ւմ կողմից են ՀՊՏՀ աշխատակիցներն առաջին անգամ տեղեկացվել «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի մասին



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Որքա՞ն հաճախ են ՀՊՏՀ աշխատակիցները կարդում «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը

պատկեր 4): Այսպես՝ 21.9%-ը (կամ հարցվածներից 30-ը) կարդում է դրա բոլոր թողարկումները, 56.9%-ը (կամ 78 աշխատակից)՝ որոշ համարներ, 17.4%-ը (24 հոգի) հազվադեպ է կարդում, և ընդամենը 3.6%-ը տեղեկագրի որևէ համար չի ընթերցել:

Հատկանշական է, որ հարցման ընտրանքը կազմող ՀՊՏՀ աշխատակիցների զգալի մասը կարծում է, որ «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի բովանդակությունն ամբողջովին (16.1%-ի կամ հարցվածների 22-ի դեպքում) կամ առավելապես (56.9%-ի կամ 78 հոգու դեպքում) համապատասխանում է իր ակադեմիական կամ մասնագիտական գործունեությանը (գծապատկեր 5): Չեզոք դիրքորոշում ունի 21.9%-ը: Հարցվածների 3.6%-ի համոզմամբ՝ տեղեկագրի բովանդակությունն այնքան էլ չի համապատասխանում, իսկ ընդամենը 1,5%-ի դեպքում՝ ընդհանրապես չի համապատասխանում իրենց ակադեմիական կամ մասնագիտական գործունեությանը:

Իրենց հետազոտություններում, դասախոսություններում կամ այլ աշխատություններում «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի հոդվածներից օգտվել, մեջբերել կամ վերջիններիս հղում է կատարել հարցման մասնակիցների 59.9%-ը կամ ՀՊՏՀ 82 աշխատակից (գծապատկեր 6):

Պատկերն ավելի հետաքրքրական է դառնում, երբ փորձում ենք պարզել «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի օգտագործման բնույ-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Որքանո՞վ է «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի բովանդակությունը համապատասխանում ՀՊՏՀ աշխատակիցների ակադեմիական կամ մասնագիտական գործունեությանը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

ՀՊՏՀ աշխատակիցներն իրենց հետազոտությունների, դասախոսությունների կամ այլ աշխատությունների մեջ արդյո՞ք օգտագործել կամ մեջբերել են «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի հրապարակումներից կամ հղում կատարել դրանց

թը (գծապատկեր 7): Թեև նախորդ հարցադրման մեջ 40.1%-ը հավատացնում էր, որ երբևէ որևէ կերպ չի օգտագործել տեղեկագիրը, առավել թիրախային հարցադրման դեպքում այդպիսիների մասնաբաժինը կրճատվել է մինչև 11.6%, որոնք շարունակել են պնդել, որ չեն օգտագործել տեղեկագիրը կամ դժվարացել են որևէ կերպ պատասխանել տվյալ հարցին: Առաջարկվող տարբերակներից ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում տարածված է (54.7%-ի կամ 75 հարցվածի դեպքում) տեղեկագրի օգտագործումը որպես ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի համար խորհուրդ տրվող աղբյուր: Հարցվածների 38.7%-ը (53 հոգի) տեղեկագիրն օգտագործել է իբրև ուսանողներին հանձնարարվող լրացուցիչ նյութ, 37.9%-ը (52 հոգի) որոշ հոդվածներից օգտվել է իր հետազոտությունների շրջանակներում, 29.9%-ը (41 հոգի) «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրում ունի առնվազն մեկ հրապարակված հոդված, 26.3-27.7%-ը դա օգտագործել է դասախոսության կամ սեմինարի ժամանակ՝ որպես քննարկման նյութ (օրինակ): Տեղեկագիրը, իբրև գովազդային նյութ կամ հյուրերին մատուցվող նվեր, օգտագործել է հարցվածների



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Ինչպե՞ս են «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրն օգտագործել իրենց աշխատանքում ՀՊՏՀ աշխատակիցները



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

«ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի ո՞ր խորագրերն են ավելի արժեքավոր համարում ՀՊՏՀ աշխատակիցները

2.2%-ը:

Ինչ վերաբերում է հոդվածների խորագրերի նկատմամբ ունեցած հետաքրքրությանը, ապա ընթերցողների շրջանում ավելի պահանջված են «Տնտեսության զարկերակ», «Ֆինանսական համակարգ», «Կրթություն, նորարարություն, գիտելիք», «Շուկաներ և մրցակցություն» և «Հայաստան և աշխարհ» խորագրերի ներքո տեղ գտնող հրապարակումները (գծապատկեր 8), որոնք համեմատաբար մեծ թիվ են կազմում (աղյուսակ 1):

«ԱՄԲԵՐԴ» տեղեկագրում կատարվող հետազոտությունների որակից ՀՊՏՀ աշխատակիցների բավարարվածության գնահատման պատկերը հետևյալն է. լիովին բավարարված է հարցվածների 43.8%-ը կամ 60 աշխատակից, մասամբ բավարարված՝ 28.5%-ը (39 հոգի), չեզոք դիրքորոշում է հայտնել 27%-ը կամ 37 աշխատակից, այնքան էլ բավարարված չէ 0,7%-ը (ընդամենը 1 հոգի): Իսկ հրապարակումների որակից ընդհանրապես չբավարարված չկա (գծապատկեր 9):

Հարցմանը մասնակից ՀՊՏՀ աշխատակիցներից 133-ը կամ 97.1%-ը վստա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9

Որքանո՞վ են ՀՊՏՀ աշխատակիցները բավարարված «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրում կատարվող հետազոտությունների որակից



ԳԾԱՊԱՏԿԵՐ 10

Արդյո՞ք ՀՊՏՀ աշխատակիցները գործընկերներին կամ ուսանողներին խորհուրդ կտան կարդալ «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը

հաբար խորհուրդ կտա գործընկերներին կամ ուսանողներին կարդալ «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը: Հարցադրմանը բացասական պատասխան է տվել միայն 4 աշխատակից կամ ընտրանքի 2.9%-ը (գծապատկեր 10):

Նմանօրինակ հարցում կատարվել է նաև ՀՊՏՀ ուսանողության շրջանում՝ նպատակ ունենալով բացահայտելու, թե ուսանողներն ինչ չափով են տեղեկացված և հետաքրքրված «Ամբերդ» տեղեկագրի հրապարակումներով:

Հարցմանը մասնակից դարձած 1101 ուսումնառողից ձևավորված ընտրանքը բաշխվել է հետևյալ համամասնությամբ. ընտրանքի 95.5%-ը կամ 1051-ը բակալավրիատի, 2.9%-ը կամ 32-ը՝ մագիստրատուրայի ուսանող է, իսկ մնացած 1.6%-ը կամ 18-ը՝ ասպիրանտ ու հայցորդ (գծապատկեր 11):

Ուսանողների բաշխվածքն ըստ ֆակուլտետների հետևյալն է. հարցմանը մասնակցության ամենաբարձր ցուցանիշն (382 ուսանող կամ ընտրանքի 34.7%-ը) արձանագրվել է կիրառական ֆինանսների ֆակուլտետում, հաջորդը՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետն է (297 ուսանող կամ ընտրանքի 27%-ը), ապա կառավարման ֆակուլտետը (204 ուսանող կամ մասնակիցների 18.5%-ը): Տնտեսագիտական ֆակուլտետից հարցմանը մասնակցել է 95 ուսանող (8.6%), տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալագիտության ֆակուլտետից՝ 79 ուսանող



ԳԾԱՊԱՏԿԵՐ 11

Հարցվողների բաշխվածքն ըստ կրթական մակարդակի



ԳԾԱՊԱՏԿԵՐ 12

Հարցվողների բաշխվածքն ըստ ֆակուլտետների

(7.2%), իսկ ամենաքիչ մասնակցությունն ապահովվել է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում՝ 44 հոգի կամ ընտրանքի ընդամենը 4%-ը (գծապատկեր 12):

Եթե յուրաքանչյուր ֆակուլտետից հարցման մասնակիցների թիվը դիտարկում ենք այդ ֆակուլտետի առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընդհանուր թվաքանակի համատեքստում, ապա պարզ է դառնում, որ մասնակցության տեսակարար կշռով առաջատար են հաշվապահական հաշվառման և աուդիտի (որտեղ հարցմանը մասնակցել է առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների 41%-ը) և կիրառական ֆինանսների (40%) ֆակուլտետները: Կառավարման ֆակուլտետից հարցմանը մասնակցել է առկա կրթաձևում ուսումնառողների 19.7%-ը, տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալագիտության ֆակուլտետից՝ 16.5%-ը, տնտեսագիտական ֆակուլտետից՝ 12.%-ը, իսկ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետից՝ ընդամենը 6.1%-ը[9]:

Հարցվածների գերակշիռ մասն (505 հոգի կամ մասնակիցների 45.9%-ը) 1-ին, 401-ը կամ 36.4%-ը՝ 2-րդ, 136-ը կամ 12.4%-ը՝ 3-րդ, իսկ մնացած 56-ը կամ 5.1%-ը 4-րդ կուրսի ուսանողներ են (գծապատկեր 13):

Ուսանողների պարագայում ևս «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի վերաբերյալ տեղեկա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 13

Հարցվողների բաշխումն ըստ ուսումնառության տարիների

[9] Հաշվարկների համար հիմք են հանդիսացել ՀՊՏՀ ուսումնական բաժնի կողմից 2025 թ. հունվարի 1-ի դրությամբ տրամադրված վիճակագրական տվյալները:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 14

Ինչպե՞ս կամ ո՞ւմ կողմից են «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի մասին առաջին անգամ տեղեկացվել ՀՊՏՀ ուսանողները

տվության գլխավոր աղբյուրը ՀՊՏՀ կայքէջն է, որի միջոցով էլ հենց այդ մասին առաջին անգամ իրազեկվել է հարցվածներից 469-ը կամ 42.6%-ը: 31.8%-ը (350 ուսանող) տեղեկագրի մասին լսել է համակուրսեցիներից, 19.9%-ը (219 ուսանող)՝ դասավանդող դասախոսից, 12,4%-ը (136 ուսանող) հրապարակումներին ծանոթացել է առցանց որոնման արդյունքում: Գրադարանից կամ ընթերցասրահից, ֆակուլտետային ցուցափեղկից, դասընթացի նյութերից, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակիցներից տեղեկագրի մասին տեղեկացվածները համեմատաբար փոքր թիվ են կազմում: Գծապատկեր 14-ում ներառվել են նաև ի սկզբանե չնախատեսված, բայց մեկից ավելի ուսանողների կողմից առաջարկված տարբերակները՝ ուսանողական խորհրդից, ՀՊՏՀ քոլեջից, վերստուգիչ հանձնաժողովից, «Բաց դռներ», գարնանային և աշնանային ճամբարների միջոցառումների շրջանակներում և այլն:

Ի տարբերություն ՀՊՏՀ աշխատակիցների, ուսանողներն ավելի հազվադեպ են կարդում «Ամբերդ» տեղեկագիր. հարց-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 15

Որքա՞ն հաճախ են ՀՊՏՀ ուսանողները կարդում «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 16

Արդյոք ՀՊՏՀ ուսանողներն օգտագործել են «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը՝ որպես անհատական աշխատանք, ռեֆերատ, հետազոտական նախագիծ, հոդված, ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ գրելու աղբյուր

վածների 54.9%-ը կամ 604 ուսանող երբեք չի կարդացել, 28%-ը (308 ուսանող) կարդում է հազվադեպ, 15,5%-ը (171 ուսանող) կարդում է միայն որոշ թողարկումներ, և միայն 1.6%-ը կամ 18 ուսանող կարդում է տեղեկագրի բոլոր թողարկումները (գծապատկեր 15):

Հարցվածների միայն փոքր հատվածն է (18.5% կամ 204 ուսանող) «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրն օգտագործել որպես անհատական աշխատանք, ռեֆերատ, հետազոտական նախագիծ, հոդված, ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ գրելու աղբյուր (գծապատկեր 16):

Պետք է նշել, որ արձանագրված արդյունքներն օրինաչափ են ու հավաստի, քանի որ մեր հետազոտության ընտրանքում գերակշռում են 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները, որոնք, ամենայն հավանականությամբ, դեռևս չեն հասցրել կատարել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

Հարցմանը մասնակցած ուսանողների 4.5%-ը (49 հոգի) կարծում է, որ «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի բովանդակությունն ամբողջովին համապատասխանում է իրենց ուսումնառության թեմատիկ շրջանակին, 20.9%-ի (կամ 230 ուսանողի) դեպքում դա առավելապես համապատասխանում է: Այս հարցում, սակայն, հարցվածների գերակշիռ մասն (64.1%-ը կամ 706 ուսանող) ունի չեզոք դիրքորոշում: Եվս 4%-ի (44 ուսանողի) կարծիքով՝ դա այնքան էլ չի համապատասխանում, իսկ 6.5%-ի (72 ուսանողի) դեպքում՝ ընդհանրապես չի համապատասխանում (գծապատկեր 17) իրենց պահանջներին:

Ուսանողների շրջանում համեմատա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 17

Որքանով է «ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի բովանդակությունը համապատասխանում ՀՊՏՀ ուսանողների ուսումնառության բովանդակությանը

ԳԾԱՊԱՏԿԵՐ 18

«ԱՄԲԵՐԴ» տեղեկագրի ո՞ր խորագրերն են ՀՊՏՀ ուսանողներն ավելի արժեքավոր համարում

բար մեծ է «Ֆինանսական համակարգ», «Կրթություն, նորարարություն, գիտելիք», «Իսկ Դուք գիտե՞ք, որ», «Շուկաներ և մրցակցություն» և «Հայաստան և աշխարհ» խորագրերի նկատմամբ հետաքրքրությունը (գծապատկեր 18):

Այդուհանդերձ, ուսանողների 88.1%-ը կամ 970 ուսանող խորհուրդ կտար տեղեկագիրն այլ ուսանողների (գծապատկեր 19):

Հետազոտության ընթացքում հարցվողներին առաջարկվել են նաև բաց հարցեր՝ ճշտելու տեղեկագրում ամփոփվող նյութերի օգտակարության և պահանջվածության աստիճանը: Բաց հարցերի առնչությամբ առաջարկներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Միաժամանակ, հարցվողները դրակա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 19

Արդյո՞ք ՀՊՏՀ ուսանողները խորհուրդ կտան «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրը մյուս ուսանողներին

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Հարցվողների առաջարկներն «Ամբերդ» տեղեկագիրն ավելի պահանջված և օգտակար դարձնելու ուղղությամբ[10]

ՀՊՏՀ աշխատակիցներ	ՀՊՏՀ ուսանողներ
Մարքեթինգի ժամանակակից գործիքների կիրառմամբ «Ամբերդ» տեղեկագրի գովազդ սոցցանցերում, ԶԼՄ-ներում և տարածում համալսարանից դուրս՝ ապահովելով ավելի լայն ճանաչում հասարակության շրջանում:	Տեղեկագրի գովազդ և առաջմղում (PR)
	Քանի որ տեղեկագրի հոդվածները մշտապես հետաքրքրական են, ուսանողների համար կազմակերպել բաց հանդիպումներ՝ դրանք քննարկելու, վերլուծելու և ավելի ուսանելի դարձնելու համար:
Համալսարանում ուսանողների համար կազմակերպել քննարկումներ՝ յուրաքանչյուր համարի հրապարակումից հետո:	Բարձրացնել իրազեկվածության աստիճանն ուսանողության շրջանում՝ տեղեկատվական հանդիպումների, բաց դասերի կամ ինտերակտիվ միջոցառումների շնորհիվ:
Ուսանողների հետ պարբերաբար կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ:	Ուսանողներին ավելի շատ իրազեկել հոդվածների և հետազոտությունների մասին: Ուղղորդել դեպի տվյալ գրականությունը:
Տեղեկագրի նյութերն առավել ակտիվորեն օգտագործել ուսումնառության գործընթացում՝ դրանց հիման վրա թեմատիկ հանձնարարությունների տրմամբ:	Ուսանողների համար «ԱՄԲԵՐԴ» տեղեկագիրն ավելի օգտակար դարձնելու համար անհրաժեշտ է դա համադրել կրթական ծրագրերի հետ: Շատ դեպքերում հավելյալ տեղեկատվություն ստանալու համար ուսանողները հենց «ԱՄԲԵՐԴ»-ի աշխատություններից են օգտվում, սակայն ոչ բոլոր դասախոսներն են անդրադառնում դրանց կամ լուսաբանում: Կարծում եմ՝ դասախոսները պետք է ավելի շատ խոսեն այդ մասին և համապատասխան տեղեկություններ տրամադրեն:
Որքան հնարավոր է տեղեկագիրն ավելի շատ ներկայացնել լսարաններում, քանի որ հատկապես ուսանողների համար է դա կարևոր՝ ելնելով վերջինիս գիտահանրամատչելի բնույթից:	
Ընդլայնել հետազոտողների շրջանակը: • Ներգրավել դասախոսական կազմը: • Որպես հոդվածագիրներ՝ ներառել ուսանողներին՝ սկսած բակալավրիատի 3-4-րդ կուրսերից: • Մեծացնել ուսանողների ներգրավվածությունն ինչպես տեղեկագրի վերլուծականների պատրաստման գործում, այնպես էլ կենտրոնի հետազոտական աշխատանքներում:	Ուսանողներին հետազոտության մաս դարձնելն ավելի կնպաստի հետաքրքրության մակարդակի բարձրացմանը և մոտիվացմանը:
	Տեղեկագրի հեղինակների շարքում ներգրավել նաև ուսանողներին:
Հրապարակման ժամկետները պահպանել, չուշացնել, քանի որ կորչում են հոդվածների արդիականությունն ու դրանց նկատմամբ հետաքրքրությունը:	Կարգավորել հրապարակումների ժամանակացույցը՝ որոշ հոդվածների ժամանակավրեպ դառնալուց և արդիականության կորստից խուսափելու նպատակով:
Ավելի շատ շտեմարաններում ներառել:	Ավելացնել գրականության ցանկը: Ավելի շատ գծապատկերներ օգտագործել:
Կիրառել ավելի շատ ընթերցված հոդվածների վիճակագրության վարման գործիքակազմ:	Հավելել ուսանողների համար նախատեսված հարցազրույցներ, վիկտորինաներ, որոնք նրանց կմոտիվացնեն:
Խթանել տեղեկագրի բաժանորդագրությունը հատուկ արշավներով՝ հատվածավորելով լսարանը:	Վիզուալ բովանդակության բարելավում՝ ինֆոգրաֆիկ հնարքների կիրառմամբ:
Հնարավորինս միջազգայնացնել:	Տեղեկագրում ընդգրկել իրական, գործնական օրինակներ:
Օպտիմալացնել խորագրերը: Մշտադիտարկման միջոցով զտել պակաս պահանջված խորագրերը/հոդվածները և, որպես մշտական, պահել ավելի քիչ քանակով խորագրեր:	Նյութերը ներկայացնել ավելի հասկանալի լեզվով՝ առանց ավելորդ ակադեմիական բարդությունների, ինչը կօգնի ուսանողներին արագ ընկալել դրանց բովանդակությունը:
Ձևավորել սեփական էջեր էլեկտրոնային հարթակներում՝ հետադարձ կապի ապահովման գործիքներով:	

[9] «Ամբերդ» տեղեկագիրն ավելի պահանջված և օգտակար դարձնելու ուղղությամբ ՀՊՏՀ աշխատակիցների և ուսանողների կատարած առաջարկությունները մասնակիորեն համընկնում են, համընկնող կամ համանման դաշտերը գունավորված են, իսկ տարբերվողները՝ անգույն:

նորեն են արձագանքել «Ամբերդ» տեղեկագրի աշխատանքին: Կարծիքներից մի քանիսը մեջ ենք բերում բառացիորեն.

- «Բավական բարձր նշաձող է սահմանված: Առավել կարևոր եմ համարում ընդգծել, որ վերնագրերի կրեատիվ և տարբերվող ձևակերպումները գրավում են բոլորի ուշադրությունը՝ ձևավորելով հետաքրքրություն և վերլուծությանը ծանոթանալու ցանկություն»:
- «Իմ կարծիքով՝ ամբողջությամբ ծառայում է իր տեղեկատվական նպատակին՝ առանց թերացումների»:
- «Ամեն բան շատ լավ և գրագետ արվում է»:

Հարցմանը մասնակից դասախոսները հանդես են եկել նաև «Ամբերդ» տեղեկագիրը ԲԿԳԿ (նախկին՝ ԲՈԿ) ընդունելի պարբերականների ցանկում, ինչպես նաև SCOPUS գիտաչափական շտեմարանում ընդգրկելու առաջարկությամբ: Սակայն, հարկ ենք համարում հստակեցնել, որ տեղեկագրի առջև ի սկզբանե բոլորովին այլ խնդիր է դրվել. դրա առաքելությունը հասարակությանը հուզող հիմնախնդիրների մասնագիտորեն ներկայացումն ու տնտեսագիտական բառամթերքով համեմված գրագետ վերլուծությունների հրամցնումն է հանրությանը՝ դրանով իսկ ապահովելով ՀՊՏՀ ճանաչելիությունը սեփական «դարպասներից դուրս»:

Քիչ չեն նաև «Ամբերդ» տեղեկագրի ավելի լայն տարածմանը, տարբեր կապուղիներով հանրահռչակմանն ուղղված առաջարկները: Սակայն, այդ ուղղությամբ էլ մշտապես ձեռնարկվում են աշխատանքներ, որոնց մասին, թերևս, պատշաճ կերպով չի բարձրաձայնվում: Հավանաբար, քչերը գիտեն, որ «Ամբերդ» տեղեկագրի յուրաքանչյուր թողարկում առաքվում է Երևանի և մարզերի շուրջ 80 պետական և մասնավոր շահագրգիռ կառույցներ, որոնց թվում են՝ ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ փոխվարչապետների գրասենյակները, ՀՀ Ազգային ժողովի որոշակի հանձնաժողովները, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ ՊԵԿ-ը, նախարարությունները, մարզպետարանները, դեսպանատները, պետական և մասնավոր բուհերը, գիտահետազոտական ինստիտուտները, գրադարանները և այլն: Ի լրումն, տեղեկագրի հրապարակումները պարբերաբար տեղադրվում են այցելուների և ընթերցողների մեծ լսարան ունեցող մասնագիտացված վերլուծական կայքերում, ինչպիսիք են՝ Banks.am - Ֆինանսական Հայաստան, Armenpress, 1in.am, Զարկերակ Լրատվական, B24.am, 5 TV Channel / 5-րդ ալիք, InfoPort.am, Հայաստանի բանկերի միություն և այլն:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ՀՊՏՀ «Ամբերդ» տեղեկագիրը սիրված և պահանջված է ընթերցողների կողմից, ունի մշտական և օր օրի ավելացող ընթերցողների բանակ, որն ամենևին էլ չի սահմանափակվում համալսարանի ներքին շահակիցներով: Տեղեկագիրը ձեռք է բերել կիրառական նշանակություն ինչպես ուսանողության, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում: Միաժամանակ, ուսանողները բարձրաձայնում են «Ամբերդ» տեղեկագրի հրապարակումների վերաբերյալ առավել իրազեկ լինելու և ուսումնառության ընթացքում թեմատիկ հրապարակումները քննարկման առարկա դարձնելու պահանջարկի մասին, ինչը, անշուշտ, տեղեկագրի նկատմամբ աճող հետաքրքրության լավագույն վկայությունն է:

Այսպիսով՝ կարող ենք հավաստել, որ «Ամբերդ» տեղեկագիրը ծառայում է իր առաքելությանը՝ արդիական և ընկալելի աշխատանքների մատուցմամբ էապես նպաստելով մասնագիտական հետազոտությունների և վերլուծությունների լսարանի ընդարձակմանը:

Ամփոփելով «Ամբերդ» տեղեկագրի հընգամյա կենսագործունեության յուրօրինակ հաշվետվությունը՝ լիահույս ենք, որ վերջինս դեռ երկար տարիներ ընթերցողին ասելիք կունենա...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2025 թվականի գործունեության ծրագիր (հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2025 թվականի հունվարի 31-ի N7-11 որոշման հավելվածով), https://asue.am/upload/files/scientific-board/31-01-2025/%D5%88%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4%2031.01.2025%20N%207-11.pdf
2. «Ամբերդ» տեղեկագիր, 2019/1, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2019, 68 էջ, https://asue.am/upload/files/amberd/Amberd-bulletin.pdf
3. «Ամբերդ» տեղեկագիր, 2020/1(2). Կորոնավիրուսը և աշխարհը (հատուկ թողարկում), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2020, 123 էջ, https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf
4. «Ամբերդ» տեղեկագիր, 2020/2(3), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2020, 146 էջ, https://asue.am/upload/files/amberd/2020.2.pdf
5. «Ամբերդ» տեղեկագիր, 2020/3(4), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2020, 99 էջ, https://asue.am/upload/files/amberd/2020.3.pdf
6. «Ամբերդ» տեղեկագիր, 2020/4(5), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2020, 103 էջ, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%202020.4.pdf
7. «Ամբերդ» տեղեկագիր, 2020/5(6), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2020, 93 էջ, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր5.pdf
8. «Ամբերդ» տեղեկագիր, 2020/6(7), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2020, 106 էջ, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%206.pdf
9. «Ամբերդ» տեղեկագիր, 2021/1 (8), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2021, 110 էջ, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%2021.1.pdf
10. «Ամբերդ» տեղեկագիր, 2021/2(9), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2021, 111 էջ, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%2021.2%20(1).pdf
11. «Ամբերդ» տեղեկագիր, 2021/3(10), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2021, 133 էջ, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%2021.3.pdf
12. «Ամբերդ» տեղեկագիր, 2021/4(11), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2021, 94 էջ, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%2021.4.pdf
13. «Амберд» Бюллетень, 2021/5(12), Издательство АГЭУ «Тнтесагет», Ереван, 2021, 112 с., https://asue.am/upload/files/amberd/Տեղ.21.5.pdf
14. “Amberd” Bulletin, 2021/6(13), ASUE “Tntesaget” Publishing House, 2021, 106 p., https://asue.am/upload/files/amberd/Տեղ.%2021.6.pdf
15. «Ամբերդ» տեղեկագիր, 2022/1(14), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2022, 118 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2022/-amberd-texekagir-1
16. «Ամբերդ» տեղեկագիր, 2022/2(15), Հատուկ թողարկում. Ռուս-ուկրաինական հակամարտություն. Հայացք Երևանից, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2022, 140 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2022/-amberd-texekagir-2
17. «Ամբերդ» տեղեկագիր, 2022/3(16), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2022, 145 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2022/-amberd-texekagir-3
18. «Ամբերդ» տեղեկագիր, 2022/4(17), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2022, 122 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2022/-amberd-texekagir-4
19. «Амберд» Бюллетень, 2022/5(18), Издательство АГЭУ «Тнтесагет», Ереван, 2022, 97 с., https://asue.am/am/amberd/bulletin/2022/-amberd-texekagir-5
20. “Amberd” Bulletin, 2022/6(19), ASUE “Tntesaget” Publishing House, 2022, 128 p., https://asue.am/am/amberd/bulletin/2022/-amberd-texekagir-6
21. «Ամբերդ» տեղեկագիր. Հատընտիր՝ նվիրված «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 10-ամյակին, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2023, 180 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2023/amberd-texekagir-10-tari
22. «Ամբերդ» տեղեկագիր, 2023/1(20), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2023, 121 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2023/amberd-texekagir-1

23. «Ամբերդ» տեղեկագիր, 2023/2(21), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2023, 154 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2023/am-berd-texekagir-2
24. «Ամբերդ» տեղեկագիր, 2023/3(22), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2023, 141 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2023/am-berd-texekagir-3
25. «Ամբերդ» տեղեկագիր, 2023/4(23), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2023, 121 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2023/am-berd-texekagir-4
26. «Амберд» Бюллетень, 2023/5(24), Издательство АГЭУ «Тнтесагет», Ереван, 2023, 91 с., https://asue.am/am/amberd/bulletin/2023/am-berd-texekagir-5
27. "Amberd" Bulletin, 2023/6(25), ASUE "Tntesaget" Publishing House, 2023, 86 p., https://asue.am/am/amberd/bulletin/2023/am-berd-texekagir-6
28. «Ամբերդ» տեղեկագիր, 2024/1(26), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2024, 139 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2024/am-berd-bulletin-1
29. «Ամբերդ» տեղեկագիր, 2024/2(27), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2024, 115 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2024/am-berd-bulletin-2
30. «Ամբերդ» տեղեկագիր, 2024/3(28), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2024, 136 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2024/am-berd-bulletin-3
31. «Ամբերդ» տեղեկագիր, 2024/4(29), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2024, 107 էջ, https://asue.am/am/amberd/bulletin/2024/am-berd-bulletin-4
32. «Амберд» Бюллетень, 2024/5(30), Издательство АГЭУ «Тнтесагет», Ереван, 2024, 97 с., https://asue.am/am/amberd/bulletin/2024/am-berd-bulletin-5
33. "Amberd" Bulletin, 2024/6(31), ASUE "Tntesaget" Publishing House, 2024, 86 p., https://asue.am/am/amberd/bulletin/2024/amberd-bulletin-6
34. ՀՊՏՀ, «Ամբերդ» տեղեկագիրը 5 տարեկան է՝ https://asue.am/am/news/amberd-newsletter-is-5-years-old, 27.12.2024:
35. ՀՊՏՀ, Տնտեսագիտական համալսարանի ուղեղային կենտրոնը հրապարակել է «Ամբերդ» տեղեկագիրը. շնորհանդեսը կայացավ այսօր (լուսանկարներ), https://asue.am/am/news/presentation-of-am-berd-bulletin, 16.12.2019:
36. ՀՊՏՀ, «Ամբերդ» տեղեկագիր, https://asue.am/am/amberd/bulletin

Давид АХВЕРДЯН
Проректор по науке, АГЭУ,
доктор экономических наук, профессор
Анна ПАХЛЯН
Эксперт-научный сотрудник исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

ПО СЛУЧАЮ ЮБИЛЕЯ

ПЯТИЛЕТНЯЯ ОДИССЕЯ БЮЛЛЕТЕНЯ «АМБЕРД»: ОБЗОР В ФАКТАХ И ЦИФРАХ

Бюллетень «АМБЕРД» — периодическое аналитическое издание одноименного исследовательского центра — издается уже пятый год подряд, предлагая экономическому сообществу научно-популярные профессиональные исследования по различным направлениям экономических отношений и геополитических процессов.

За глянцевой обложкой информационного бюллетеня "АМБЕРД" скрывается кропотливая работа целой команды, усилия которой направлены на постоянное улучшение содержания и качества публикаций.

В течение 2019-2024 гг. издано 32 номера аналитического бюллетеня «АМБЕРД» (из них 31 текущий и 1 юбилейное издание). Осознавая необходимость расширения круга читателей, начиная с 2021 года 2 из 6 ежегодных выпусков бюллетеня стали издаваться полностью на иностранных языках. На сегодняшний день вышло 4 выпуска бюллетеня на русском и 4 на английском языках. Всего опубликовано 417 аналитических статей, распределенных по 22 различным рубрикам.

Данная статья представляет собой своеобразный мониторинг пятилетней «одиссеи» аналитического бюллетеня «АМБЕРД», в рамках которого посредством опросов, проведенных среди сотрудников и студентов АГЭУ, дана оценка актуальности издания и степени воздействия на читателей, а также выявлены существующие проблемы и недостатки и представлены основные направления совершенствования.

Ключевые слова: *АГЭУ, Научно-исследовательский центр «Амберд», бюллетень АМБЕРД, спрос, результаты опроса*

Davit HAKHVERDYAN
Vice-Rector for Science,
Doctor of Science, Professor, ASUE
Anna PAKHLYAN
Expert - Researcher at «Amberd» Research Center,
PhD in Economics, Associate Professor, ASUE

ON THE OCCASION OF THE ANNIVERSARY

A FIVE-YEAR ODYSSEY OF THE "AMBERD" BULETIN: A REVIEW IN FACTS AND FIGURES

The analytical periodical of the same name of the "Amberd" Research Center, "AMBERD" Bulletin, has been published for five years in a row, presenting the economic community with popular science professional analyses on various manifestations and issues of economic relations and geopolitical developments.

Under the glossy cover of the Amberd Bulletin lies the meticulous work of an entire team, whose efforts are aimed at constantly improving the content and quality of the publications.

During 2019-2024, 32 issues of the "AMBERD" Bulletin were published (of which 31 are current and 1 is anniversary). Recognizing the need for internationalization, from 2021, 2 out of 6 annual issues of the newsletter began to be published exclusively in foreign languages. To date, 4 Russian and 4 English issues of the newsletter have been published. In total, 417 analytical articles have been summarized under 22 different headings.

This article is a unique monitoring of the five-year "odyssey" of the "AMBERD" newsletter, within the framework of which, through surveys conducted among ASUE employees and students, its applicability and degree of impact were assessed, existing problems and shortcomings were identified, and the main directions for improvement were clarified.

Key words: *ASUE, "Amberd" Research Center, AMBERD Bulletin, demand, survey results*